



Մեզի եւ կղանքի բաժանմամբ սահմանգույցի շէնք Ռումինիայում

Ինչչ վ են Ի ռի մծ- մի հի տչ Լկ ԷԿՈՍԱՆ Ի ռտի քնչ Լ ները

Այդպիսի արտաքնոցներում մեզը եւ կղանքը միմյանց չեն խառնվում: Չատող համակարգի շտրոհիվ դրանք հավաքվում են առանձին եւ ենթարկվում

համապատասխան մշակման: Մեզը հավաքվում եւ պահպանվում է ամբարում: Կղանքը հավաքվում է խցիկում կամ դուլյում եւ անմիջապես ծածկվում որեւէ չոր նյութով, օր՝ չոր մոխրի կամ կրի եւ հողի կամ փայտյա տաշեղների խառնուրդով, այսինքն՝ կոմպոստացվում է: Կղանքանյութը պետք է պահել հնարավորինս չոր վիճակում:

Կղանքի կչ մչ չ ռտի Լ ման եւ մեզի պահեստավորման ընթացքում սպանվում են բակտերիաները

Կղանքային նյութում միշտ կան մեծ քանակությամբ մանրէներ: Կղանքի պահպանումն առնվազն մեկ տարի եւ դրա կոմպոստացումը նպաստում են մանրէների ոչնչացմանը: Ցուրտ կլիմա ունեցող վայրերում կոմպոստացման համար ավելի երկար ժամանակ է պահանջվում: Այնուամենայնիվ, քանի որ յուրաքանչյուր անձ տարեկան «արտադրում է» մոտ 50 կգ կղանք, այդպիսի երկար ժամանակահատվածի համար մեծ տարողություն չի պահանջվում:

Մեզում մանրէները ոչնչանում են, եթե այն պահում են վեց ամիս: Առողջ մարդու մեզը մանրէազերծ /ստերիլ/ է: Սակայն, բոլորս էլ մեր կյանքի ընթացքում երբեմն հիվանդանում ենք: Ահա թե ինչու, ապահովության համար մեզը նախ պահպանվում է: Տեսային տեսությունների համար որպես պահպանման ժամկետ առաջարկվում է մեկ ամիսը, բայց դա պարտադիր չէ այն դեպքում, երբ մեզն օգտագործվում է պարտեզի համար: Հասարակական արտաքնոցների համար մեզի պահպանման ժամկետը 6 ամիս է, որի ընթացքում ոչնչանում են ցածր խտություններով միկրոօրգանիզմները: Կոմպոստացված կղանքանյութը հողի հիանալի լավորակիչ է եւ այն ցանքսից կամ տնկելուց առաջ կարելի է ծածկել հողով:

ԷԿՈՍԱՆ-ի արտադրանքի օգտագործումը գյուղատնտեսությունում

Մեզը հարուստ է ազոտով, ֆոսֆորով, կալիումով եւ այլ սննդարար նյութերով: Այն որպես պարարտանյութ կարելի է օգտագործել գյուղատնտեսության եւ այգեգործության մեջ: Մեկ անձից մեկ օրում ստացված մեզը բավական է մեկ քառ. մ հողի պարարտացման համար, 30 մարդու մեզը, որը հավաքվել է մեկ տարում, կարող է պարարտացնել 1 հա հողը /10 000 քառ. մ/: Ազոտի բարձր պահանջի դեպքում մեզը կարելի է ավելի հաճախակի օգտագործել: Ցանքսից կամ տնկելուց առաջ կարելի է մեզը լցնել հողի վրա՝ առանց նախապես ջրով բացելու: Բույսերի աճի ժամանակ մեզը նախօրոք բացում են 1:3 հարաբերությամբ /1 մաս մեզ, 3 մաս ջուր/ եւ այդ խառնուրդը լցնում են հողի վրա՝ խուսափելով տերեւների, մրգերի կամ ցողունների վրա թափելուց:

Կոմպոստացված կղանքը հարուստ է ֆոսֆորով, կալիումով եւ օրգանական նյութերով: Լավագույն արդյունքը ստացվում է այն ժամանակ, երբ այդպիսի 1-2 Լ կոմպոստը կիրառում են 1 քառ. մ հողի վրա:

Առողջապահական զգուշացումներ

Կղանքանյութի մանրէների հետ շփումից խուսափելու համար կիրառեք հետեւյալ 3 կանոնները

- ✓ Մեզը կամ կոմպոստը մի կիրառեք այն բանջարեղենի վրա, որը նախատեսված է հում վիճակում ուտելու համար:
- ✓ Մեզը կամ կոմպոստը մի օգտագործեք, եթե բերքահավաքին մնացել է մեկ ամիս կամ պակաս ժամանակ:
- ✓ Լվացեք ձեռքերը էկոսան արտաքնոցից եւ դրա արտադրանքից օգտվելուց հետո:

Տեղեկությունների համար դիմեք «Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությանը

375019, ՀՀ, ք. Երեւան
Բաղրամյան պող. 24դ, սենյակ 609
Հեռ: (+374-10) - 52 36 04
E-mail: office@awhhe.am
URL: www.awhhe.am



www.womenforwater.org



Women in Europe for a Common Future
www.wecef.org

Սույն հրատարակությունը իրագործվել է Հոլանդիայի Արտաքին գործերի նախարարության աջակցությամբ TMF ծրագրի շրջանակներում:

ԷԿՈՍԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՄՈՏԵԿՈՒՄ



Մարդու օրգանիզմը միջին հաշվով տարեկան արտադրում է 50 կգ կղանք եւ 500լ մեզ:
Հոսող ջրով մեկ արտաքնոցը տարեկան օգտագործում է 12 000լ ջուր կըված 550լ կղանքի եւ մեզի հեռացման համար:



Մեզի եւ կղանքի բաժանմամբ բազմաթիվ տիպերի զուգարաններ կան, եւ դրանցից բոլորում մեզը հեռացվում եւ պահեստավորվում է անջատ

Կի մ հկչ ռի մ Ի ռտի քնչ ւ ների Ի Ի տ տեռի կներ

Էկոսան արտաքնոցները կիրառվում են բնակավայրերում, քաղաքներում, գյուղերում, մեկ հարկանի տներում, ինչպես նաեւ բազմաբնակարանային շենքերում: Էկոսան արտաքնոցներ կարելի է կառուցել ինչպես դրսում, այնպես էլ շենքի ներսում, քանի որ դրանք գարշահոտ չեն: Էկոսան արտաքնոցները կարող են տեղավորվել դրսում, ներսում, լինել զուգարանակոնքով կամ առանց դրա /ծնկները ծալելով/, առանց ջրի կամ հոսող ջրի քիչ քանակության օգտագործմամբ:



Մեզը գերազանց պարարտանյութ է, իսկ կոմպոստացված կղանքայնությունը հողի հիանալի լավորակիչ է



ԻԿՈՍԱՆ Ի ռտի քնչ ւ ը Իրջի կի միջի տի մի Ի ռչ ւնչ տնչ Ի ռտի սչ ը Ի եւ քիչ կի խռի տի ը

Էկոսան արտաքնոցը բարձրակարգ լուծում է հատկապես այն վայրերի համար, որտեղ չկա խմելու ջուր կամ կոյուղու համակարգ: Էկոսան արտաքնոցների համար հոսող ջրի առկայությունը պարտադիր չէ: Ի հակադրություն հորատի պարտաքնոցների եւ նեխած տարողությունների, որոնք հաճախ նույնիսկ չեն դատարկվում, Էկոսան արտաքնոցի դեպքում մեզը եւ կղանքը հողի մեջ չեն թափանցում եւ չեն աղտոտում գրունտային ջրերը: Այդպիսի արտաքնոցում կղանքային նյութը

ԻԿՈՍԱՆ ԱՐՏԱՔՆՈՑՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ

սովորական ջրային զուգարանակոնքերի եւ հորային արտաքնոցների համեմատ

եւ մեզը առանձին հավաքվում եւ փոխակերպվում են անվտանգ պարարտանյութի, եւ այն կիրառելիս լավանում է հողի որակը: Մեզը պարունակում է մեծ քանակությամբ այնպիսի արժեքավոր սննդային նյութեր, ինչպիսիք են ազոտը, ֆոսֆորը եւ կալիումը, որոնք կարելի է օգտագործել հողագործության մեջ: Մեզը կղանքից առանձնացնող համակարգի շտրիկիվ Էկոսան արտաքնոցները հոտ չեն արձակում եւ չեն հրապուրում ճանճերին: Ահա թե ինչու, այդպիսի արտաքնոցները կարելի է կառուցել տան ներսում, որտեղ ավելի տաք է եւ հարմարավետ: Ավելին, հոսող ջրով արտաքնոցների համեմատ Էկոսան արտաքնոցների շինարարության համար ավելի քիչ ծախսեր են պահանջվում: Ջրամատակարարման եւ կոյուղու համակարգին միանալու անհրաժեշտություն չկա: Պոմպերի կարիք նույնպես չի զգացվում:

Կանանց եւ աղջիկների առողջության խնդիրներ

Կանայք եւ աղջիկներն ավելի են տուժում ոչ համարժեք սանիտարական վիճակից, քան տղամարդիկ եւ երիտասարդ տղաները: Ուսումնասիրություններից պարզվել է, որ դպրոցներում արտաքնոցների բացակայության պատճառով աղջիկները խուսափում են դպրոց հաճախելուց: Դպրոցի ներսում կառուցված Էկոսան արտաքնոցի առավելությունը ցուրտ եղանակին այն է, որ հատկապես աղջիկների մոտ նվազում է միզապարկի վարակների, ինչպես նաեւ սեռական անհանգստությունների վտանգը:



Իկչ ռի մ Ի ռտի քնչ ւ ների Ի ռի սեխլընջ ւ ների

- ✓ Իչ Ի հչ սչ ւ ն են հի ըմի ըի սետչ ւ ըմի մ եւ հիգիեմի մի ըի ըմի մի կի ըիի կ, մչ ւ միռկ կեմտոչ մի կի մ կչ մչ ւ ըչ ւ հի մի կի ըգի ըի ւ Ի կի մչ ւ ըմի մ Ի նչ քչ ւ ն:
- ✓ Գի ըմի հչ տ չեն եւ չեն հորի չ չ ւ ըչ ւ ն Ի Ի ներին:
- ✓ Իչ ռչ ծ քչ ւ ը չի քգտի գչ ըկսչ ւ ն:
- ✓ չ Ի չ Ի հի նտչ ւ ն միի ւ չ ւ ն ջրի մի տի կի ըի ըմի մ եւ կչ մչ ւ ըչ ւ հի մի կի ըգի:
- ✓ չ են Ի ծտչ տչ ւ ն գրչ ւ ն տի մի ջրերը:
- ✓ չ են Ի ծտչ տչ ւ ն գետերը, Խեերը կի մ կչ տղ միկրչ Ի ծտչ տիչ ներչ տ:
- ✓ ռ տեծկչ ւ ն են հիի մի Ի չ Ի ըի ըմի մ մչ ւ ը եւ Ի ռ տի ւ ն չ ւ ն են հչ ծի տիի կը:
- ✓ չ Ի հչ Ի նչ ւ ն են ռնչ ւ ն իչ մչ ւ ըրերը:
- ✓ Ի ըի մք կի ըեխ Ի կի ռչ ւ ն եւ Ի ռտի մ ներոչ ւ ն:
- ✓ չ կի Ի ռեկտորի Ի ներգիի մի Ի ների ըեհտչ ւ ընջ ւ ն ջրի մի մ չ չ ն մչ երի գչ ըկի ըկմի մ հի մի ը:
- ✓ Իչ ռչ ծ ջրչ տի ըմի քնչ ւ ն ների հի մեմի տ Ի ըմի ըի ըչ ւ ըմի մ եւ չ Ի հչ Ի նմի մ կի խռերը Ի սեխլ քիչ են:
- ✓ Խնմի մչ ւ ն են ֆիմի մռի կի մ միջչ ւ ն ները: